


ԻՐԱՆԻԵ

ԼՐԱԳՐԻՒ ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ



ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Պոլիտիկայ համար Տարեկան 12 ֆր.
» » Վեցամսեայ 6 ֆր.
(Արտասահմանի համար (Երկու քիւր մեկ ծրարով) Տարեկան 14, վեցամսեայ 7 ֆր.
Ամերիկայի » 2.60 տղ. վեցամս 1.50

Համակ դրամ՝ եւայլն դրկի հետեւեալ հասցեով
ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ «ԻՐԱՆԻԵ» ԼՐԱԳՐՈՅ. — ՎՍԻՆԱ (Պուլկարիա)
Редакция на ВѢСТНИКЪ
„Иравункъ“
ВАРНА (България)
Rédaction du journal
„Ira vounk“
VARNA (Bulgarie)

Խմբագրութեան ուղղաւ գրութիւն/ եւ չեն դրկուիր եւ յարմար դատաւ- ները միայն կը հրատարակուին աւ- րոյցովին կամ մասամբ:
Մանուցման տղը 20 սանթիմ. երե- լիս անկէ, անկողնակա համար 20 0/0 գնով կը լինի:

ՄԵՐ ՄԱՍԸ

Թերթ մը որ գոյութիւնը պահ պահելու համար, իր բաժանորդնե- րուն քմահաճոյքին կամ խաբրին կը ծառայէ և կամ դատարարի մը շահը միայն իրեն տեսակէտ կունենայ, դա ժողովրդինը չէ. հետեւեալս ազգային ալ չէ:

Թերթ մը, որ իր պատկանած համայնքին, իր ապրած միջավայ- րին մէջ վստասող խոշոր ազտո տութիւնները չուզէր մատնանիշ ընել, վախճալով որ բաժանորդներ կը կորսնցնէ, կը նշանակէ թէ դա բարոյական ոչ մի ուժ չի ներկա- յացներ. ա'լ ժողովուրդը անոր մահը պէտք է վճռէ:

Հանրութեան օգտին, ժողովուր- դին յառաջդիմութեանը նուիր- ւած ազգային թերթի մը սեպուհ պարտականութիւնն է հանրային շահը միայն իրեն տեսակէտ ընտ- րել, և անոր պահպանութեանը համար կռիւ մղել, եթէ նոյնիսկ այդ կռիւը իր գոյութեան վտանգ սպառնայ:

Իրաւունք իր այս պարտականու- թիւնը լաւ ըմբռնած ըլլալով, որ- չափ հարուածած է խաչագողը ու խաչագողութիւնը, նոյնչափ կծու կերպով քննադատած է այն ամեն թերթիւնները ու սխալները ու- ռոնք իր բաժանորդներուն, նոյն իսկ իր բարեկամներուն կողմէ գործուած են:

Այս ճշմարտութիւն մ'է զոր ինքնագովութիւն պէտք չէ նկա- տել:

Ողջեալ որ իրաւունքի ձողկու- մին ենթարկուող չենքով շնորհքով պարոն մը իր բաժանորդագրու- թիւնը դադարեցնելէ վերջ, ցաւ է յայտնած մեր մէկ բարեկամին թէ «Իրաւունքի վեց տարուան բաժա- նորդ-բարեկամը ըլլալու հակա- ռակ, զիս ձաղկելու ապերախտու- թիւնը ունեցած է. որ մըն ալ նոյն բանը ձեզ կընէ:»

Այս պարզամիտ խոստովանու- թիւնը կը բաւէ ապացուցանել այն ճշմարտութիւնը թէ, մեր բաժա- նորդները և նոյն իսկ անձնական բարեկամները ինքզինքնին իրաւունք

քի ձողկումէն զերծ չեն կրնար նկատել, երբ հանրային գործի մը մէջ թերթի թիւն մը, սխալ մը կընեն: Միզ խմբագրութեան ծանր պաշտօնի կապող թերթին նիւթա- կան ժլատ վարձատրութիւնը չէ. այլ զգացումի պարտականութիւնը կատարելու և խղճի անդորրութիւն վայելելու իղձն է որ մեզ կաշկան- դած է իրաւունքին: Այսօր ուրիշ եւ յայտարարելու թէ, ոչ անձնա- կան հակառակութիւն և ոչ նիւ- թական ակնկալութիւն ցարդ չեն չորած խղճիս անդորրութիւնը վրդովելու:

Շատ մը ջոյ աղաներ շատոնց դադրած են «իրաւունք» ստանա- լէ, ինչ որ մեզ բնաւ հոգ պատ- ճառած չէ. զի խղճեմքիս հան- դարտ է և ժողովուրդի համակրու- թիւնն ալ մեր հետը: Ոչ ալ այսօր ալ վառնայի թաղ. խորհրդոյ ան- դամները կը հրաժարին բաժանոր- դագրութենէ, որովհետեւ իրենց վրայ շատ կը քաշենք եղեր. այս ալ բնաւ հոգ չէ. և ուրիշ պիտի ըլլանք եթէ մեր քննադատու- թեանց պատճառ տուող սխալները ճանչնալու արթնութիւնը ունե- նան: Կարծեմ, դժբաղդաբար, այդ տրամադրութիւնը առ այժմ կը պակսի անոնց քով, քանի որ իրենց առաջին գործը եղած է վերջը ցոյց տուող մատեն խորհիլ: Սակայն անոնք որչափ ալ խորհին, մենք պիտի ջանանք միշտ մեր մատը անոնց վերքերուն վրայ դը- նել, բարեպաշտ կա'մ այդ վերքերը բուժին կա'մ անդամատին:

Գոռայէք

ՄՏԱԾՈՒՄՆԵՐՍ

Քննադանցական բառերու անո- ռոյ նախադասութիւն մը չէ որ, մէջտեղ նետելով՝ ընթերցողներու ուշադրութիւնը անիմաստ ու ա- նըմբռնելի չաղակրատութեանց քա- ոտի մը մէջ կը փորձեմ մտորցնել. այլ պարզ հայեացքով մը, կը փափաքեմ մեր ազգային ամենէն կենսական ու կարեւոր ինքրոց մա- սին, որքան կը ներէ համեստ կա- ռողութիւնս, իՄ ՄՏԱԾՈՒՄՆԵՐԸ յայտնել:

Եթէ՝ անկեղծապէս կը փափա- քինք, ո'ն ամեն բարդ հարցեր ու ճնշիչ խնդիրները, զոր «Ինչ կը մտածեն» յօդուածով համառօ- տակի մատնանիշ ըրած էի, իրենց օրինաւոր լուծման վիճակին մէջ դնել, յեղափոխութեան արատնե- ը մաքրել, անհրաժեշտաբար պէտք է որ, մեր ժողովուրդը բա- թափի իր տարածելով անհոգու- թենէն, ու ինքն իր մեծ դերին մէջ անաղաղ վճռականութիւնով մը գործէ:

Պէտք է ժողովուրդը ապտա- կէ ու անողորմաբար խտրակէ, տեղ տեղ բուսած չալութամիտ ջո- ջերը՝ որոնք իրենց քմահաճոյքին կը ձգտին յարմարցնել ժողովրդա- կան նուիրական շահերն ու իրա-ւունքները, ու իր գործերը ամե- նէն վստասելի ձեռքերու յանձնէ: Պէտք է, առաջ մղէ ու գործա- դրէ՝ ան ամեն ազգայնա ու հա- սարակութեան օգտակար գաղա- փարներ ու մտքերը, որոնք պար- բերաբար մամուլի միջոցաւ կը յա- բուցուին, կը յաղորդուին ան- հետեւեալ կը մնան:

Ժողովուրդը տիրապէս պէտք է պարտաւորեցնէ մեր յեղափոխա- կան փնտելութեամբ ու ընդարձու- ցած մարմինները, որ իրենց՝ ծո- ցին մէջ ընող ու ժողովուրդի վրա տահուլիւնը չարաչար գործածող տղուկ ու մակաբոյծ «ստամոք- ս»ի յեղափոխականները, զորս ինք ժողովուրդը մատնանիշ կընէ, վերջապէս ատ տեսակ սուրբ գոր- ծերէ, իբրեւ ապականուած ան- դամներ, հեռացնեն:

Պէտք է ժողովուրդը զօրաւոր կերպով ուժ տայ ու աշխատի որ միութեան ու համերաշխ գործակ- ցութեան փրկարար դրօշակի ներ- քեւ զան խմբուին, գործեն ու շարժին մեր հայրենիքի վերածը- նութեան ու ազգային գոյութեան համար կռուելու պատրաստ ու պատրաստուող ցիւր ու ցան եղած բոլոր ուժերը:

Ու երբ առ ամեն անհրաժեշտ «պէտքերն» ու «հարցերը» ժողո- վուրդը, ինք, իր անդիմադրելի հեղինակութիւնով օրինաւորապէս կարգադրէ ու անմիտեւիօրէն իր

ձեռնհաս ըլլալու մեծ ապացոյցը տայ, ա'յն ատեն թող վստասա- բար հաւատայ որ, ամենէ անձ- նասէր սկիպտիկէն մինչեւ ընչա- քաղց ու քարախրտ վաշխառուն, անշիւ ու վճիտ հայեացքներով, իրենց նիւթակն ու բարոյական աջակցութիւնը, յեղափոխ. մար- մնոյն զօրանալուն համար չեն խը նայեր: Ու մեր ամենուս մտքին ու սրտին այնքան մօտիկ եղող ան կնճռոտ հարցերը, առանց մեծ դժուարութեան ու իրենց բնա- կան կարգով, հետզհետէ օրինա-ւոր լուծման վիճակի մէջ կը մըտ- նեն:

Այսքան պարզ ու համեստ ոճով յայտնած իմ սեփական մտածում- ներս, անտարակոյս, հետաքրքիր յարգոյ հարցապնդողներու ուշա- դրութիւնն պիտի դրաւէ: Ու կը յուսամ որ, անոնք իբր ժողովուրդի շատ զգայուն ու որոցաւ գաղա-կ- ները, ատ մտածումներուս լիութի գործադրութեան համար, իրենց եռանդը թէ՛ դրապէս ցոյց պիտի տան, ու գործնապէս ապացուցա- նեն թէ՛ զօրաւոր կամքը ու անկեղծ մտադրութիւնն է զիրենք մղողը այնքան փափկաւ ըլլալու և ան- պատճառ սեփական մտածումներս հրապարակու իմանալու:

Իբրեւ պարզ գրող, կը կար- ծեմ որ մտածելու ու գրելու պարտ- քըս այս մասին կերպով մը կա- տարելու վիճակին մէջ եմ: Ու կը յուսամ որ, անոնք ալ իբրեւ անձ- նուէր ու որոցաւ ժողովուրդ, աս մտածումներս գործադրելու պարտականութիւննին կըմբռնեն. հակառակ պարագային, ինծի հետ շատերուն պիտի հաւատացնեն որ իրենց կրկնակի հարցապնդումը անկեղծութեան ու է հաւաստի- քը չի ներշնչել:

Գիշ մը անկեղծ ըլլանք:

Ղ. Պ. Նանապետեան

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

Եւրոպական մեծ պիտույթներն իր մինչեւ ցարդ արտաքին կարգի ճիգով մը ջանք չեն խնայեր Արեւելքի մեծ հարցը չը բորբոքելու համար։ Սակայն հակառակ այս ամենուն, եթէ Տաճկաստանի օրուան կացութիւնը ինկատի առնենք, պիտի տեսնենք որ եւ թաղութեանն ու երեսակայութեանն ալ ծանր է։

Հակառակ արեւելքի քրիստոնէից պաշտպան ու ազատարար Զարին այն յայտարարութեան թէ, Մակեդոնական շարժումները զինք զոհ չեն ձգեր և այդ ազգէն խըրախուսած Սուլթանի ձեռք առած ծայրայեղ միջոցներուն հանդէպ, Մակեդոնիա խաղաղիւէ շատ հեռու է։

Դժբաղդ Մակեդոնացիներ վերին աստիճանի յուսահատ, վերջնական նապէս որոշած է, կամ մարդավայել կեանք մը ձեռք ձգել կամ ազատութեան համար մեռնիլ։ Մօտաւոր մեծ շարժման մը հաւանականութիւնը կայ, շարժում մը որ Մակեդոնիայի շատ իրաւամբ պիտի ընեն։

Մրենոյն տոնն Եւթնի Արաբաց պատմաբանութիւնն ալ սպառնալից հանգամանք մը ստանալով վրայ է։ Այս անգամուն ապրտամբ Էմիրու Շէյխերը, Մուհամմէտի ընտանեկան անունը կրող եւ իսլամական աշխարհին մէջ շատ մեծ հեղինակութիւն ունեցող ցեղապետներն են, որոնք թուրք Սուլթանին թէ կառավարութեան եւ թէ «խալիֆայութեան» զէմ հաւատարմապէս կը բողոքեն ու կ'ապտամբին։

Ասոնցմէ զատ արդէն ամենուն ծանօթ ելեւմտական տաղանդն ալ, որ թուրքիոյ յաւիտենական պատուհաններէ մին դարձաւ, ծայրագոյն աստիճանին մէջն է։

Պաշտօնէից գոնէ պայրամէ պայրամ մէկ մէկ ամսական վճարելու համար, պանքայէ պանքա դիմումներ կը ըլլան։

Նուիրական կարաւանը Մէքքէ զրկելու համար, հարկ եղած ճամբու ծախքերու հայթայթման համար, երկաթուղիի ընկերութեանց սնտուկները ձեռք կառնուին։

Ու աւելին է քանի մը հոգիէ բաղկացեալ պատուիրակութեան մը Լոնտոն երթալու ծախքին համար Մալիյէն մէկ երկու հազար ոսկի վճարելու անկարող կը գտնուի։

Ասոնց հետ մէկտեղ չը մոռնանք անգամ մ'ալ շեշտել այն աղբատու թիւնը որուն ենթարկուած է թիւրքիաբնակ ժողովուրդը, որ այսօր տալու ա'լ բան մը չունի։

Այս ամեն պատմաբանները ակնյայտի իրողութիւններ և անվիճելի ճշմարտութիւններ են, ու հիւսնոյն ատեն որոշ նշանները այն քայքայումին ու տարրալուծման, որուն թիւրքիա բնական օրէնքով արդէն դատապարտուած է մէկ դարէ ի վեր, իր ամենավաթար վարչութեան և կողմնակալ արդարութեան միօրինակ թափով մը շարունակելուն համար։ Սխալած չենք ըլլար երբ ըսենք թէ ներկայի նշանները հոգեվարքի և ճգնաժամի նշաններ ալ կըրնան համարուիլ։

Սուլթանը քաղաքական և երկրային կորուստներէ վերջը իր գոյութիւնը քաջքշելու համար յայտնի բան մէ որ յոյսը իր խալիֆայութեանը վրայ դրած էր։ Սակայն այսօր Օսմանի գահուն երկու զլխաւոր սխնեքը, քաղաքական ու կրօնական, հաւասարապէս կը զարնուին։

Քրիստոնեայ քաղաքակրթութեան խաբէր օր մը չէ օր մը պիտի զարնէր Արեւելքի պետին քաղաքական գիրքին և պիտի հարկադրէր անիկա ինքն իր մէջ ամփոփուելու, սակայն անդին խալիֆայութիւնը Սուլթանը կրկին կրնար բարձրագոյն հեղինակութեան մը մէջ պահել գոնէ Մահմետական աշխարհին մէջ։ Սակայն ինչպէս կերելի այդ գիրքէն ալ ինչպէս զնուած է, հնգկատու նի միլիոնաւոր Մահմետականներն ալ Սուլթանը խալիֆէ չեն ճանչնար, ինչպէս կը յայտարարեն Եւրոպական թերթերը։

Քաղաքական անկումի ճամբուն վրայ, տապալիւն մօտ կրօնականն ալ կուգայ։ Օսմանեան գահուն ճնշման տակ հեծող թէ Մահմետական և թէ Քրիստոնեայ քաղաքներուն բողոքի ձայները շատ զօրաւոր կ'արձագանգեն Եւրոպիայի ու Պապը Ալիի մէջ, ուր անհանգստութիւնը վերին աստիճանի է։

Վիեննայէն ազէկ լուրեր չեն հասնիր. հեռագիրները և Եւրոպական թերթերը Աւստրիական խորհրդարանին աղմկալից և պայթակցեցողիչ նիստերու մանրամասնութիւնները կ'իմացնեն, նիստեր, որոնք վեճերով սկսուած ու կռիւններով փակուած են։

Խորհրդարանական այդ ծեծկռուքները ուղղակի արդիւնքն են Աւստրիոյ կայսրութիւնը կազմող այլացեղ տարրերուն մէջ տիրող երկպառակութեանց, որ նոր չէ և երթալով աճելու ու սաստկանալու վրայ է։ Եւ այդ խռովութեանց յարաճուն ընթացքը զգալի կերպով կը միջոցնէ Հապսպուրկի տան ապագան։

Կռիւր Գերմաններու և Սլաւ Չէխներուն մէջ կեցող լեզուի խընդիրն է, որ յաւիտենական տագնապալից հարցի մը հանգամանքը ստացած է ալ։ Աւստրիոյ մէջ օրուան պաշտօնական լեզուներն են Գերմաներէնը ու Հունգարերէնը։ Առաջինը՝ բացի Հունգարիայէն, Աւստրիական ամեն գաւառներու մէջ պաշտօնական լեզուն է։

Իսկ այսօր Սլաւ Չէխերը կառավարութեան կը պահանջեն որ ամեն Սլաւ ժողովուրդներու, որոնք Աւստրիոյ մէջ կը բնակին, լեզուներն ալ իրենց կարգին պաշտօնական լեզու ըլլան իրենց բնակավայրերու մէջ, որուն կը հակառակին Գերմանները ամեն կարելի միջոցներով։

Եթէ Աւստրիոյ հողային և կամ ցեղային կազմակերպութիւնը աչքի առնել բերենք, պիտի տեսնենք որ այսօր Աւստրիոյ բնակչութեան հարիւրին՝ 40ը սլաւ է, 27ը գերման, 17ը հունգարացի, 7ը Ռումէն և 2ը իտալացի։

Այս հաշուով Չէխերու, Սլաւ տարրին, որ Հապսպուրկի կայսրութեան մէջ պատկանելի մեծամասնութիւն կը կազմէ, պահանջը խիստ արդարացի կերպով։

Սակայն հարցին իսկական բնութիւնը լեզուներու պաշտօնական ըլլալը կամ չըլլալը չէ։

Աւստրիա Գերմանական դաշնակցութեանն ընդգրկելու անշատուելին ի վեր, Գերման և Սլաւ տարրերու մէջ սկսած է խուլ իսկ այսօր յայտնի պայքարը։ Գերմանները կուզեն Աւստրիան զուտ գերման երկիր մը ընել, իսկ անդիին Սլաւ տարրը կը ջանայ իր հեղինակութիւնը ու ուրոյնութիւնը յարգել տալ։

Այսօր Սլաւ տարրին պահանջով միայն լեզուի ինքրին կարգադրութիւնն է, ուրիշ քաղաքական ու եւ ձգտում ցոյց չեն տար։ Սակայն մեծապէս յուսալի է որ ներկայ դրութեան քիչ մը ևս տեւողութիւնը ծնունդ տայ այնօրինակ դէպքերու որոնք Աւստրիան կազմալուծեն։

Քաղաքական ահագին յեղաշրջումի հաւանականութիւնն է ասիկա, սակայն բաւական զօրեղ հաւանականութիւն մը երբ նկատի առնենք որ Գերմաններուն հակառակութիւնը և Սլաւներու յամառութիւնը երկու կողմէն ալ ծայրայեղութեան աստիճանին մէջ է։

Սուրբ

ԹՂԹԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

(Մեր մասնաւոր քրթակցէն)

Սօֆիա, 25 փետր.

Քաղաքար մը կազմելու համար թէ ինչ ենք և ինչ ապագայ կրնանք ունենալ, կարծեմ աւելորդ չէ գիտնալ թէ ինչ կուտակցութիւններէ կը բաղկանայ արդի երեսփոխական ժողովը և ինչպէս կազմուած է նախարարութիւնն ալ։

Երեսփոխանաց ամբողջ թիւը որ պիտի կազմէ 167, այսօր ունինք միայն 155 հոգի ընտրուած։ Մնացած 12ին համար նոր ընտրութիւն։ զի այդ 12 տեղերը իրենց ըուէն տուած են ուրիշ տեղերէ ընտրուածներու, կամ կան երես.

փոխաններ որոնք մէկէ աւելի տեղերէ ընտրուած են, սակայն պիտի կրնան ճանչցուիլ միայն անդի մը համար, զոր իրենք կորոչեն։

Արդ թողովոյ այս 12ը՝ 155 երեսփոխանք կը բաժնուին այսօր սապէս, իրենց թուոյն նայելով.

1. Սթամպ	35 երեսփ.
2. Ցանգ.	32 »
3. Քարապ.	27 »
4. Սթոյլ.	25 »
5. Երկրագ.	17 »
6. Անկախք.	11 »
7. Ռատոսլ.	7 »
8. Ընկերվ.	1 »
—	
155	

Ըսել է այսօր 8 կուսակցութեան կը բաղկանայ Սօփիանէն, որուն և ոչ մէկն ալ առանձին օրի. նախան մեծամասնութիւն կը կազմէ, այսինքն 155ին կէսէն 1-2 աւելի, որ պէտք է ըլլայ 77-78, Քարապ-Ցանգովիստներ միտ.

ցած կազմած են նախարարութիւնը, սակայն երկուքը ունին միայն 59 ձայն։ Սթոյլովիստներ որ խոստացած են պաշտպանել կովուտ տալ նախարարութեան, թէեւ պայմանաւոր, եթէ միացնենք առաջին երկուքին հետ կուսակցութեան 84, որուն վրայ կրնայ կռիւնի նախարարութիւնը։

Միւս կուսակցութիւններն ալ ամեն մէկը տէր և յամառ իրենց նպատակին, չըսեմ իրենց սկզբունքին, պիտի շարժին անշուշտ ինչպէս կը պահանջէ իրենց ծրագիրը։

Արդ կարելի պիտի լինի արդեօք իրաց այս վիճակին մէջ տեւականութիւն ունենալ գոնէ 1-2 տարի և կառավարել երկիրը և տեղի չտալ նոր ընտրութեանց։

Սթամպուլովի անկումէն յետոյ նախարարութիւն մ'ունեցանք ըմբօլով-Ռատոսլովով, որ տարի մալ չ'ապրեցաւ. վերջինս քաջուեցաւ և նոր ընտրութեամբ առաջիկը գրեթէ ասպարէզին միակ տէրը մնաց և կրցաւ տարրերը կառաքել երկիրը։ Սթոյլովի կառավարութեան դժգոհ Ռատոսլովովիստներ յաջողեցան կառավարութեան ղեկն իրենց ձեռք առնուլ և ահա նոր ընտրութիւն. որուն մէջ Ռատոսլովիստները թէեւ մեծամասնութիւնը չահեցան, սակայն պարագայից բերմամբ չը կրցան բաժնուիլ իրենց գործակիցներէն, սակայն տարի մը հազիւ բոլորուեցու և ահա խորտուած ու բաժանուած, որով Ռատոսլովովի միակ մնաց։

Այս յետադարձ ակնարկը մարդըս կատարէ ինքնին հարցնել թէ արդեօք արդի նախարարութիւնն ալ այսպէս քիչ պիտի ապրի. թէեւ վերջին երեսփոխական ժողովոյ լուծումը մեղ սա ալ կը սովորեցնէ որ միակ կուսակցութեան մը կազմուած մեծամասնութիւնն անգամ ինկատի չառնուիր առ մեկ, երբ ներքին ու արտաքին պարագաներ, չըսենք պալատական

հովեր, կըստիպեն իրաց վիճակը փոխել :

Արդի պարագայից մէջ սակայն ժողովրդական հոսանք մ'ալ կայ, զոր պէտք չէ անտեսել, այն է «Սէր առ Ռուսիա», որուն շուրջ կը գտնուին շատ շատեր գոնէ ըստ երեւոյթին : Բայց ինչ բան «Երեսոյթական չէ» այսօր մեր երկրին մէջ, ինչ կընենք ու կը գործենք «սկզբունքով» :

Ահա այս է, որ մարդուս միշտ տարբեր խորհիլ կուտայ և տարբեր համոզում կը գոյացնէ քիչ թէ շատ խորհող մարդուն մէջ : Այսու հանգերձ ինկատի ունենա՞նք և սա, որ տարօրինակ ժամանակի մէջ կ'ապրինք, ուր ամեն բան կ'արելի է :

Ըսել է, մեր արդի կառավարութեան տեսակետներէն համար հաստատուած ոչ ինչ չէ կարելի ըսել : Թէեւ անցեալին ու Սահմանադրական սկզբունքներ տարբեր գաղափարներ ալ տան մեզ : զի հացի խնդիրն է ամենազորաւորը :

ՀԵՐՔՈՒՄ ՄԸ

ՇԱՐԺՈՒՄԻ ՄԷԿ ՍՈՒՑԻՆ

Ճշմարտութեամբ խնդրելով լրագրի մը ամենէն տարրական բարեմասնութիւնը կը կազմէ, իսկ մէկ քառասուն տէրէն հաճելի երեւոյթու համար, կամ թէ ու է մէկը ծայրայեղօրէն գոված ըլլալու նկատու մով հրապարակ հանած խմբագրական սուտն ալ, թէ նոյն լրագրին պատիւը կ'ազարտէ և թէ անոր խմբագրին համար բարոյական ամենէն ցաւալի անկում մը կը պատրաստէ :

Օրինակի համար «Շարժում» իր ազգային լուրերու բաժինին մէջ, քաղաքս երկու տարի պաշտօնավարող Գէորգ Վրդ. Նալպանդեանի մասին կը գրէր թէ «մէկ քանիներու նախադասաց չը հանդուրժելով, քանի քանի անգամներ հրաժարական զրկած էր Պատրիարքարան և վերջին դիմումին վրայ անոր հրաժարականը ընդունուած է :

Ահաւասիկ բացարձակ սուտ մը զոր կը փութամ հերքել ազգօգուտ թերթի միջոցաւ : Նախ և առաջ Գէորգ Վրդ. Նալպանդեան իր ազատ կամքով հրաժարած չէ, այլ հրաժարեցոյցաւ և ոչ թէ Պատրիարքարանի կողմէ, այլ քաղաքիս թաղական խորհրդոյ հաւաքական պաշտօնադրովը հրաժարեցուցուած է : Պատճառն ալ թաղ. խորհրդոյ իրաւանց դէմ ոտնձգութիւն մ'ըրած և անոր հանդէպ անպատշաճ լեզու գործածած ըլլալն է :

Երկրորդ, յիշեալ Վարդապետը հրաժարեցնող թաղ. խորհրդոյ անդամները այն անձերն են, որոնք նոյն իսկ ասկէ քանի մը չափ առաջ, Գէորգ Վարդապետը զովելու համար, բառ չէին կրնար

գտնել ոչ հայերէնի և ոչ ալ տաճկերէնի մէջ :

Երրորդ, Գէորգ Վարդապետը հրաժարեցնող թաղականները իրենց սրտումը ի պաշտօնէ հազար զամ են Պուլկարիոյ այցելու հովիւին և այս վերջոյն հասնուիլին : Երկրորդ է յաջողակէն իրական նացնել իրենց որոշումը : Ասկէ զատ եկեղեցւոյ սնտուկին մէջ դրամ չը գտնուելուն պատճառաւ, Գէորգ Վարդապետի պահանջը եղող 300 լէֆն ալ թաղականներէն երեք տն. դամոց ստորագրութեամբը տեղւոյս պուլկարական պանդոխտ մասնաճիւղէն փոխ առնուելով, յիշեալին յանձնուած է, անտարակոյս նորին Գերապետութեան թաղ. խորհրդի հաշտութեամբ հանձնուած : Պ.

Թ. Բաղարճը
25 փետր.

«ԻՐԱՆԻՆՔ»Ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Տ. Ա. Թեմիքեան Զօրուն. — Ստացանք Ձեր նամակը որով Ա. մերիկահայոց համակրանքը կը յայտնէ մեր թերթին, առաջարկելով որ, եթէ կարելի է, թիւրքերէն մասն ալ հայերէնի վերածենք :

Յայտնի է թէ, քիչ բացառութեամբ, ամեն թիւրքահայատակ հայ թիւրքերէն կը հասկնայ. սակայն կան բաւական թուով թիւրքահայատակ և մանաւանդ Պուլկարահայեր որոնք գրեթէ հայերէն ընտել չեն հասկնար : Ահա այս վերջինները արտասահմանեան ազատ լուրերէ չգրկելու համար, ըստիպում ենք «Իրաւունք»-ի չորրորդ երեսը թիւրք լիզուալ քաղաքական լուրերու յատկացնել : Ինչ որ հայախօս ազգայնոց զորկանք մը չէ, քանի որ պարզ և մեկին լիզուալ մը կը գրենք թերթերէն :

Ուստի մեր թերթի համակրողներու մէջ եթէ բնաւ թիւրքերէն չի հասկցողներ կան՝ այնպիսիներ թող համարեն թէ «Իրաւունք»-ի ալ չորրորդ երեսը, ուրիշ թերթի բնական, ծանուցումի յատկացած է, և միևնոյն ատեն թող յիշեն սա առաւելութիւնը թէ անով հազարաւոր թիւրքախօս ազգայիններու ծառայութիւն մը կը մատուցանենք : Քանզի շատեր կան որոնք միայն թիւրքերէն մասին համար «Իրաւունք» կըստանան. բայց թիւրքերէն կարգալէ վերջ հայերէն մասին վրայ ալ հետաքրքրութեամբ աչք պտըտցնելով, տակաւ առ տակաւ սկսած են հայերէն ալ հասկնալ :

Իսկ բացառաբար ըստ Ձեր առաջարկութեան կրնանք Ամերիկայի մեր համակրներուն փափաքը զոհացնել, իրենց զրկուելիք թիւրքերէն չորրորդ երեսն ալ հայերէն տպագրելով, եթէ կանխաւ մեզ 100 նոր բաժանորդ ապահովենք, որով կարելի ըլլայ մեզ աւելնալիք ծախքը գոցել :

—)(—

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Բնիկ Ապաւան—Մատենցի միհայնաճի Մկրտիչեան Պետրոս 30 տարեկան սպիտակամորթ, միջահասակ ոտկեհեր և խաժանի, ինչպէս նաև իւր եղբորդին Գրիգոր 25 տարեկան, միջահասակ, թխագոյն, սևաչեւայ, սևահեր և ծաղկաւեր գէմքով, երկար ժամանակէ իվեր իրենց հայրենիքէն մեկնած լինելով, կատարելապէս ստուգուած է թէ ալիմ Պուլկարիոյ սահմանաց մէջ կը գտնուին :

Կը խնդրուի մեծարգոյ ազգայիններէն որ եթէ վերոյիշեալ Պետրոսի և Գրիգորի ուր ըլլալին գիտցող կայ, բարեհաճին ընդ փոյթ խոսցնել մեզ Ազգային Պատրիարքարանի տեղեկագրելու համար, ուսկից ստիպողաբար յանձնարարուած է մեզ :

Մնաճը աղօթարար ազգիս Այցելու Հովիւ Հայոց Պուլկարիոյ Բարբառնիկեան Ծ. վ. Պաղանկ 24 փետր. 1901
Ֆիլիպէ

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Պոլսոյ Ազգ. Հիւանդանոցի մէկ տեղակազիրը հրատարակուելով տեսնուած է թէ արդի հոգսար ձուլեան օրով մէկ տարուան մէջ հինգ կտոր կալուած նուիրուած են այդ հաստատութեան՝ 48,500 դրանչի արժէքով, եւ թէ հիւանդանոցի 1899 տարուան ելույթու քի ընդհանուր հաշուցոյցն է 1,389,499 դրանչի գումարը :

—Կրտսի թէ հիւանդանոցի որ բանոցէն, ուր տեղ թաքստու երեսուն ելած ըլլալը ըսուած էր, երեք որբեր մեռած են այն հիւանդանոցէն և երեք ալ շատ ծանր վիճակի մէջ կը գտնուին :

—Իվմիրի մէջ վերջերս մեռեր է Տ. Ստեփան Ոսկան, հանգուցեալ անցեալին մէջ շատ գնահատելի ծառայութիւններ մատուցած էր միւր գրականութեան, հանգուցեալ հրատարակելով :

—Բաքուէն լուսանկար Պ. Խ. Մէլիքեան Ախալ քաղաքի երկրորդ շարին լուսանկարները առած և Չարին մատուցած է : Չարը հրամայած է Պ. Մէլիքեանին շնորհակալութիւն յայտնել և նուէր տալ : Չարին պարգևը Բաքուի Կահնաբապետին միջոցաւ յանձնուած է Պ. Մէլիքեանին :

—Գահիրէի Հայ Լարիզործական հաստատութեանց ինկատար թատերական երեկոյթ մը տրուած է տեղւոյն խրտիվական թատրոնին մէջ : Չուտ հասոյթը եղած է 300 ոսկի : Խրտիվը այդ հանդիսին առթիւ 20 ոսկի նուիրած է :

—Մամլէմամբի հանրածանոթ Բաօֆէսէօն Տիար Յակոբ Պոյաճեան որ վերջերս Եգիպտոս գացած էր, այնտեղ հանրօգուտ շինութեանց նախարարութեան մէջ կտրուոր պաշտօնի մը կոչուած է :

—Ալէքսանդրիոյ Հայոց ազգային խալիս—Բարեգործական լիակրթութեան ի նպաստ չեղ շնորհալուցում մը տրուած է տեղւոյն Ձի գիմեա թատրոնին մէջ :

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Միացեալ Նահանգաց պարբերական հրատարակութեանց թիւն է 20,806 որոնք 52 միլիոն օրինակ կը տպեն : Ասոնցմէ 2163 օրակերթեր են որոնք օրական 10 միլիոն օրինակ կը տպեն :

—Էտուարա Է. Թագաւորը մօտերս Պէլֆապի մէջ ներկայ պիտի գտնուի թրանսպլանթիք շոգենաւին ծովը իջուցուելու արարողութեան : Այս շոգենաւը աշխարհիս էն մեծ և հսկայ շոգենաւն է : Երկայնութիւնը 213 մէտր իսկ լայնութիւնը 21 մէտր և ժամը պիտի կրնայ 23 ծովային մղոն ճամբայ կտրել :

—Անգլիացի գիտուններու կողմէ կրէտէ կատարուած հնագիտական խուզարկութիւններէն այնպիսի առարկաներ են արձանագրութիւններ երեւան ելած են, որոնք Յուսաց նախնական դարու պատմութիւնը ամբողջովին կը փոխեն :

—Անգլիացիները Ամերիկա Ինտիմանսի մէջ 3000 հոգիներ բանտին վրայ յարձակելով, դուռները կոտորելու երեք բանտապահներ վիրաւորելու և սեւամորթ մը բռնելու և դուռն հաներ են Լինչի օրէնքով ոպանուելու համար : Այս սեւամորթը ամբաստանուած է թէ վարժուէի մը սպաննած է : Ամերիկայ սեւամորթին վերջ չուան մը անցուցիւ և քաշկռակով գետի մը եզրերը տարեր է : Զամբան երեք սեւամորթներու պատանելով անոնք ալ սպաննած է : Գետը հասած ատեն սպիտակամորթ մարտիւր կամուրջէն կախած է ինզճ սեւամորթը : սակայն յանկարծ չուանը փրկելով, բազմութիւնը զայն գետեզերքը հանած է որ պէտքի ջուրը չիյնայ : Պսով ալ չը բաւականաւալով խառնիկի մը մէջ նետած են սեւամորթը որ մոխիր դարձած է :

—Պ. Պ. Մոսկան, Քարնիկի եւ Րոքֆէլլեր, Ամերիկեան մետաղագործութեան երեք մեծ խիւաները միանալով նաեւ ուրիշ կազմը ընկերութիւններու հետ, կազմած են «Միացեալ Նահանգներու պողպատի ընկերութիւն» մը, որուն գրաստանը ինչ է 220 միլիոն Անգլ. ֆլէրին :

—Վերջերս անգլիական թանգարանը նոր Մուսեա մը գրուած է որ 20000 տարուան հնութիւն մը ըլլալ կը կարծուի : Այս Մուսեան խիստ լաւ պահպանուած վիճակի մէջ կը գտնուի և գտնուած է վերին Նեղոսի եզրերէն :

—Մատրիտի մէջ Տիկին Ուպսո անուն կին մը գտական բարձրագոյն ատենի մը դիմած է իր ազգիկը և անոր պատիւն . . . ու անոր ժառանգած ահագին հարստութիւնը յաղատելու համար ժէզուիթ կրօնաւորներու ձեռքէն որոնք Օրդ. յրպաճն տուան զամ և բռնի վանքը վար դրած են անարկելով թէ օրիորդը վանական ըլլալ կուզէ : Մատրիտի բարձրագոյն ատենի վճռած է Օրիորդ Ուպսոն իր մօրը վերադարձնել :

—Բորթուկայի Օթորոյ քաղաքին մէջ ալ ժողովուրդը ժէզուիթներուն դէմ ցուցիւր ըրած է : Ամերիկայի Բլատոնա անուն մէկուն բնակարանին առաջ երթալով քարկոծած և պատահանին վարդաբոյրները կրակի տուած է : Բլատոնա ամբաստանուած է թէ կը պատահանի ժէզուիթներու կուսակցութեան (որովհետեւ ժէզուիթները աշխարհական անդամներ ալ կուսենան) և փորձած է քաղաքին Պրազիլիոյ դեր-հիւպատոսին աղջիկը առեւանդել և բռնի վանք տանիլ : Ուրիշ ամբոխ մ'ալ կա թոյիկ միաբանութեանց շենքերը քար կոծած է :

—Ատղաբաշխական խիստ հետաքրքրաշարժ տեսարան մը պարզուէր է Ֆրանսիոյ քաղաքին մէջ : Իրիկուան ժամը 11 1/2 ին և կէս գիշերուած միջոցին, լուսինը զոյգ մը մանեակով երեւցեր է : մին կապոյտ իսկ միւսը կանաչ : Այս երեւոյթին ատեն դիտուել է որ օդը խիստ ցուրտ էր : Իսկ անոր անյայտանալէն վերջ օդը զգալի կերպով ապքեր է :

